

## ԴԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՅԱԲԱՏՈՅ

Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՅայրն Աստուած անեղ, անծին, եւ անսկիզբն, այլ եւ ծնող Որդւոյ եւ բղխող Յոգւոյն սրբոյ:

Յաւատամք զԲանն Աստուած անեղ, ծնեալ եւ սկսեալ ի Յօրէ նախ քան գյաւիտեանս. ո՛չ յետոյ եւ ո՛չ կրտսեր, այլ որքա՛ն Յայրն Յայր՝ ընդ նմին եւ Որդին Որդի:

Յաւատամք զսուրբ Յոգին Աստուած անեղ, անժամանակ, ո՛չ ծնեալ, այլ բղխեալ ի Յօրէ, ԷակիցՅօր եւ փառակից Որդւոյ:

Յաւատամք զԵրրորդութիւնն սուրբ մի բնութիւն, մի Աստուածութիւն, ո՛չ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երեւելեաց եւ աներեւութից:

Յաւատամք յԵկեղեցի սուրբ, զթողութիւն մեղաց հաղորդութեամբ սրբոց:

Յաւատամք զմինն յերից անձանց զԲանն Աստուած ծնեալ ի Յօրէ նախ քան գյաւիտեանս, ի ժամանակի իջեալ յԱստուածածին կոյսն Մարիամ, առեալ յարենէ նորա՝ միաւորեաց ընդ իւրում Աստուածութեանն, իննամսեայ ժուժկալեալ յարգանդի անարատ կուսին եւ եղել Աստուածն կատարեալ մարդ կատարեալ հոգւով եւ մտօք եւ մարմնով. մի անձն, մի դէմ եւ միաւորեալ մի բնութիւն: Աստուածն մարդացեալ առանց փոփոխման եւ առանց այլայլութեան, անսերմն յղութիւն եւ անապական ծնունդ. որպէս ո՛չ Է սկիզբն Աստուածութեան նորա, եւ ո՛չ վախճան մարդկութեան նորա. (զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան:)

Յաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջալ ի վերայ երկրի, յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն. Յայր ի վերուստ վկայեալ՝ դա՛ Է Որդի իմ սիրելի. եւ Յոգին սուրբ աղաւնակերպ իջեալ ի վերայ նորա. փորձեալ ի սատանայէ եւ յաղթեալ նմա. քարոզեալ մարդկան զփրկութիւն. աշխատեալ մարմնով, վաստակեալ, քաղցեալ եւ ծարաւեալ. յետոյ եկեալ կամաւ ի չարչարանս. խաչեալ եւ մեռեալ մարմնովն, եւ կենդանի Աստուածութեամբն. մարմինն եղեալ ի գերեզմանի միաւորեալ Աստուածութեամբն եւ Յոգւովն իջեալ ի դժոխս անբաժանելի Աստուածութեամբն, քարոզեալ հոգւոցն, աւերեալ զդժոխս եւ ազատեալ զհոգիսն. յետ երից աւուրց յարուցեալ ի մեռելոց եւ երեւեալ աշակերտացն:

Յաւատամք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն համբարձեալ յերկինս եւ նստեալ ընդ աջմէ Յօր: Այլ եւ գալոց Է նովին մարմնովն եւ փառօք Յօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս: Որ եւ յարութիւն ամենայն մարդկան:

Յաւատամք եւ զհատուցումն գործոց, արդարոցն՝ կեանք յաւիտենական, եւ մեղաւորացն՝ տանջանք յաւիտենական: